ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ՝ ՈՒՂՂՅԱԼ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ՏԱՐԵԿԱՆ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

(1975 թ. փետրվարի 27)

Ամեն անգամ, երբ գրիչը ձեռք կառնենք ողջույնի խոսք ուղղելու տիրախնամ թեմիդ պատգամավորական ժողովին, Մեր սիրտը կլեցվի ուրախության և գոհունակության զգացումներով, որովհետև իբրև ձեր հոգևոր հայրը և առաջին սպասավորը մեր ս. եկեղեցվո, իրոք կմխիթարվինք ձեզմով, ձեր եկեղեցիներու շենությամբ, ձեր հոգեշահ գործունեությամբ, ձեր կրթական ու մշակութային աշխատանքներու արդյունքներով, որոնք բոլորը կծառայեն և պետք է ծառայեն երկու հիմնական նպատակներու, այն է՝ կենդանի ու վառ պահել ամերիկահայ Մեր հավատացյալ զավակներու հոգիներուն և կյանքին մեջ՝ Քրիստոսի Ավետարանի խուքը և հայ ոգեկանության լույսը:

Մանավանդ այս տարի, 1975 թվականին, երբ Մեծ եղեռնի 60-ամյակի տխուր ոգեկոչումի առիթով մեր եկեղեցին ու ամբողջ ժողովուրդը երկյուղած աղոթքներով կխոնարհին իրենց զոհված զավակներու անմոռանալի հիշատակին առաջ, պարտինք չմոռնալ, երբեք չմոռնալ որ անոնք նահատակվեցան հանուն Ավետարանի խոսքի և հանուն հայ ոգեկանության պահպանման:

Մեր նահատակներու հիշատակը հարգելու արդարագույն ուղին է, հավատարիմ մնալ անոնց կտակին և անոնց իդեալներուն:

Արդ, այսօր, Մեր սրտեն բխած պատգամը՝ ձեզի ամենուդ և համայն մեր ժողովուրդին ուղղյալ, թող ըլլա՝ արթուն հավատքով բարձր հնչեցնել

Աստուծո խոսքը և կենդանի գործի վերածել զայն, ձեր անհատական ու ընկերային կյանքին մեջ և նույնքան արթուն եռանդով անաղարտ ու ամբողջական պահպանել հայկական ոգին ու հայ մշակույթի արժեքները, մանավանդ ձեր երիտասարդ սերունդներու գիտակցության մեջ:

Անցյալ տարվան ձեր թեմական ու եկեղեցական համայնքային գործունեության նկատմամբ Մեր անհատն գնահատանքը կբերենք թեմական առաջնորդ գերաշնորհ տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին, թեմիդ ծրաջան հոգևոր հովիվներուն, թեմական խորհուրդի և ծխական խորհուրդներու հարգարժան անդամներուն և անոնց բոլոր բարեջան գործակիցներուն, մաղթելով որ Տիրոջ օգնականությամբ, սիրո և համերաշխ եղբայրության մթնոլորտի մեջ, պատգամավորական ժողովդ իր իմաստուն որոշումներով ու ծրագիրներով, դուները բանա եկեղեցանվեր կյանքի ու աշխատանքի նոր շրջանի մը, հառավել հոգևոր շինություն Մեր ամերիկահայ հավատացյալ զավակներուն:

«Գոհացարուք յամենայն ժամ ի վերայ ամենայնի, յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Հօրն և Աստուծոյ: Հնազանդ լերուք միմեանց երկիւղիւն Քրիստոսի»(Եփես. Ե 20—22):

Սուրբ Էջմիածնեն և Մեր սրտեն բոլորիդ հայրական սիրո ողջույն և օրհնություն հայրապետական:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ՝ ՈՒՂՂՅԱԼ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՀԱՅՈՑ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ ՏԱՐԵԿԱՆ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

(1975 թ. ապրիլի 7)

Մայր Աթոռ սուրբ Էջմիածնեն ուրախ սրտով պատգամավորական ժողովիդ կբերենք օրհնությունը Աստուծո և ողջույնը Մեր հայրական սիրո:

Խորին գոհունակությամբ կհետևենք տիրախնամ թեմիդ եկեղեցյաց աշխույժ գործունեության, ձեր բարեջան առաջնորդ գերաշնորհ տ. Վաչե եպիսկոպոս Հովսեփյանի եռանդուն ղեկավարության ներքո:

Կմաղթենք, որ բոլորդ անխտիր, սուրբ Հոգվով ներշնչված, սիրով միաբանած, ձեռք-ձեռքի տված, շարունակեք ի կատար ածել ձեր եկեղեցաշեն ու կրթանվեր ծրագիրները, ի մխիթարություն ամերիկաբնակ Մեր զավակներուն և ի ծաղկում թեմիդ մշակութային, դպրոցական ու երիտասարդական կազմակերպություններուն, որոնց նվիրական կոչումն է ձեր համայնական կյանքի մեջ վառ պահել քրիստոնեական լույս հավատքը և հայկական հոգին:

Թող Տերը անսասան և շեն պահե ձեր աղոթքի տուները և ձեզի ամենուդ շնորհե սուրբ ներշնչումներ ու անսպառ բարի եռանդ՝ ի հոգևոր շինություն ձեր առաջնորդության հանձնված բարեպաշտ ժողովրդյան:

«Եթէ ոք կամի առաջին լինել, եղիցի ամենեցուն կրտսեր և ամենեցուն պաշտոնեայ» (Մարկոս Թ 34):